



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 415 - Ա

24 հոկտեմբերի 2019 թ.

**ԱՎԵՏԻՔ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ  
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 164-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Ավետիք Սարգսյանի դիմումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ավետիք Սարգսյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Խանում Ափոյանի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 5-ից:

24.10.2019

X   
 ԳՆԵՆՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

**Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**  
 ք. Գավառ

✓